ՏԵՂԵԿԱՆՔ

փոփոխվող հոդվածների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
04 մարտի 1996 թ.

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին

Հոդված 18. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները և նրանց իրավունքները

Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ընտրված տեսակների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալու դեպքում:

(մասն ուժը կորցրել է 06.10.15 ՀՕ-113-Ն)

(մասն ուժը կորցրել է 06.10.15 ՀՕ-113-Ն)

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն՝

ա) միավորվել մասնագիտական միություններում և դրանց միջոցով մասնակցել առողջապահական պետական նպատակային և ապահովագրական ծրագրերի մշակմանը, բժշկական օգնության և սպասարկման լիցենզավորմանը, բժշկական շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը, իրենց իրավունքների պաշտպանությանը և միության կանոնադրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացմանը.

բ) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իրենց համբավը.

գ) ապահովագրել իրենց մասնագիտական գործունեությունը:

(18-րդ հոդվածը փոփ., խմբ. 06.10.15 ՀՕ-113-Ն)

«Հոդված 18.1. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները արտակարգ իրավիճակներում

1. Այն դեպքերում, երբ արտակարգ իրավիճակով պայմանավորված բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու համար չեն բավարարում (կամ առկա է իրական վտանգ, որ կարող են չբավարարել) համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կարողությունները, ապա կառավարության որոշմամբ կարող է թույլատրվել բժշկական օնգություն և սպասարկում իրականացնողների կողմից իրենց լիցենզիայով չնախատեսված տեսակի բժշկական օգնության և սպասարկան իրականացումը՝ որոշմամբ սահմանված պայմաններով:

2. Այն դեպքերում, երբ արտակարգ իրավիճակով պայմանավորված բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու համար չեն բավարարում (կամ առկա է իրական վտանգ, որ կարող են չբավարարել) համապատասխան բուժաշխատողները, ապա կառավարության որոշմամբ կարող է թույլատրվել որոշ բուժաշխատողների կամ ավարտական կուրսերի կլինիկական օրդինատորների ներգրավումն անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը՝ որոշմամբ սահմանված պայմաններով:»: